ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻԻ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Թումանյան

09/02/2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Նիկալ Դալլաքյանը, Կարո Ղազարյանը, Վահե Մելքումյանը,Հրանուշ Վանյանը, Արամ Քոչարյանը

Նիստին ներկա էին Թումանյան համայնքի 4 վարչական ղեկավարները

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սուրեն Թումանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռուզաննա Շահվերդյանը

Լսեցին
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը.

1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2022թ. սեպտեմբերի 02-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2)Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին
3)Թումանյան համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին
4) Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի << Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 10-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
5)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի06-035-0106-0010 ծածկագրի 1.140524 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի 06-035-0106-0008 ծածկագրի 0,2 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի 06-089-0124-0003 ծածկագրի 0.72394 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքն աճուրդային կարգով օտարելու մասին
8) Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին
9) Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին
10) Հողամասը Թումանան համայնքի սեփականություն ճանաչելու մասին
11) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի Ահնիձոր և Չկալով բնակավայրերի ԲՄԿ-ի տարածքները անհատույց տրամադրելու մասին
12) ՀՀ Լոռու մարզի Թումանան համայնքի ավագանու նստաշրջանի օրը որոշելու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 5-րդ ենթակետով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել՝ի գիտություն Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝համամաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՒԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարելով <<Հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 23.10.2000թ. թիվ 656 որոշման 9-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի հողերի փոփոխությունների վերաբերյալ հողաշինարարի կողմից տրված տեղեկանքը՝
Թումանյան համայքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի հողային հաշվեկշիռը 2022 թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմում է՝38243,81 հա, համաձայն տեղեկանքի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի<<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 10-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<ՀՀ բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով,<< Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյան համայնքի 2022թ. հունվարի 18-ի «Թումանյան համայնքի 2022թվականի բյուջեն հաստատելու մասին» N 10-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացնել նոր խմբագրությամբ՝համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդ օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-035-0106-0010 ԾԱԾԿԱԳՐԻ 1.140524 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և 5-րդ բաժնի պահանջներով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-035-0106-0010 ծածկագրի 1.140524 հա հողամասը, մեկնարկայինգինըսահմանել՝ 2 303 403 000 (երկումիլիոներեքհարյուրերեքհազարչորսհարյուրերեք) ՀՀդրամ:

2.Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3.Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-035-0106-0008 ԾԱԾԿԱԳՐԻ 0,2 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և 5-րդ բաժնի պահանջներով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-035-0106-0008 ծածկագրի 0,2 հա հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 403 920 (չորսհարյուրերեքհազարինըհարյուրքսան) ՀՀդրամ:

2.Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:3.Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 06-089-0124-0003 ԾԱԾԿԱԳՐԻ 0.72394 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽՈՏՀԱՐՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և 5-րդ բաժնի պահանջներով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-089-0124-0003 ծածկագրի 0,72394 հա խոտհարքը, մեկնարկայինգինըսահմանել՝ 400 000(չորսհարյուրհազար) ՀՀդրամ:

2.Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3.Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանօրվան հաջորդող օրվանից:
Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 31-րդ ենթակետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թի 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.08.2022թ.թիվ 119 դրական եզրակացությունը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում քաղաքացի Ռուդիկ Երիբեկի Եգանյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերից 06-035-0114-0064կադաստրային ծածկագրի 0.1293 հա վարելահողը փոխադրելու բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:
2. Առաջարկել Ռուդիկ Երիբեկի Եգանյանին համայնքային բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով նշված հողամասի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 218633,37(երկու հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր երեսուներեք դրամ երեսունյոթ լումա) ՀՀ դրամ:
3.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 31-րդ ենթակետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության

որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 04.07.2022թ.թիվ 95 դրական եզրակացությունը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում քաղաքացի Հրանտ Սպարտակի Սահակյանին սեփականությանիրավունքով պատկանողգյուղատնտեսական նշանակության հողերից 06-035-0105-001 կադաստրային ծածկագով 0.98104 հա և 06-035-0109-0001 կադաստրային ծածկագրով 0.971856 հախոտհարքները փոխադրելու բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:
2. Առաջարկել Հրանտ Սպարտակի Սահակյանին համայնքային բյուջե վճարելսույն որոշման 1-ին կետով նշված հողամասի կադաստրային արժեքների՝նպատակային նշանակությանփոփոխման պահին առկա տարբերությունը՝5 538 413,056(հինգ միլիոն հինգ հարյուր երեսունութհազարչորս հարյուր տասներեքդրամ հիսունվեց լումա)) ՀՀդրամ:
3.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության
փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացի կ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԸ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ և 52-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-18-րդ հոդվածներով , ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ քաղաքաշինության մասին օրենքով, հիմք ընդունելով ՀՀկառավարության29/04/2021թվականիթիվ 698-Ն որոշումը և որակավորված <<ԻՆԵՔՍ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար, Թումանյան համայնքի Չկալով բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Թումանյան համայնք, գ. Չկալով, 4-րդ փողոց, թիվ 46/1 հասցեում, 06-089-0026-
0007 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,09778 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման տնամերձ հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր,սեփականաշնորված չէ և այն ՀՀկառավարության 04/08/2005 թվականիթիվ1459-
Նորոշմամբ փոխանցված չէ համայնքին, առաջնորդվելով ՀՀ կառավարության 29/04/2021թ. թիվ 698-Ն որոշման 4-րդ հոդվածի 39 կետի 1-ին ենթակետի պահանջներով, նշված հողամասի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2.Նշված հողամասը ենթակա է գրանցման Թումանյանի համայնքապետարանի անվամբ:
3.Թույլատրել համայնքի ղեկավարին դիմել ՀՀ ԱԳԿ կոմիտեի
աշխատակազմի Լոռու մարզային ստարաբաժանում,նշված հողամասի համար սեփականության վկայական ստանալու համար:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՀՆԻՁՈՐ ԵՎ ՉԿԱԼՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՄԿ-ՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Համայնքային սեփականություն հանդիսացող Ահնիձոր բնակավայրի ԲՄԿ-ի զբաղեցրած տարածքը,մակերեսի չափը՝ 26 քմ(հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գյուղ Ահնիձոր,1-ին փողոց, Արարողությունների սրահի շենք 6) և Չկալով բնակավայրի ԲՄԿ-ի զբաղեցրած տարածքը,մակերեսի չափը՝ 8 քմ (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գյուղ Չկալով,Կենտրոնական փողոց,Վարչական շենք 34/1) անժամկետ, վարձակալության կարգով տրամադրել <<Դսեղ առողջության կենտրոն>> ՊՈԱԿ-ին բուժկետերի աշխատանքները կազմակերպելու համար:

Կողմ-8 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Թումանյան համայնքի ավագանու կանոնակարգի 5-րդ գլխի 49-րդ 50-րդ և 51-րդ կետերով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանան համայնքի ավագանու նստաշրջանի օրը որոշել 2022 թվականի հոկտեմբերի 07-ը, ժամը 11:00 :

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐԱՄԱՅԻՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԵԳԱՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐԻԿ ԽԱՉԻԿՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՅՈՒԴՄԻԼԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՌՈՄԱՆ ՇԱՔԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՎԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝

ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ _____